ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/95

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ի կողմից 13.08.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 13.08.018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

««Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի /այսուհետ նաև՝ Պատվիրատու/ կողմից դեղորայքի, բժշկական պարագաների և լաբորատոր նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/0104» ծածկագրով գնման ընթացակարգ /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/:

Ընթացակարգով հրավերի 1-ին մասի 1-ին կետով գնման առարկան խմբավորվել է 95 չափաբաժինների:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող ֆինանսական միջոցներ:

«Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը.

բ. սույն ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, որի իսկությունը հանձնաժողովը գնահատում է նույն հրավերով սահմանված պայմաններով:

գ. եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ մասնակիցը անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է, ապա նույն ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված պայմանը չի գործում և տվյալ մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն:

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների հայտ է ներկայացրել նաև «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն /այսուհետ նաև՝ Ընկերություն/:

www.gnumner.am կայքի օրենսդրության բաժնի փաստաթղթերի օրինակելի ձևեր ենթաբաժնում սահմանված գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող գնումների բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերով թիվ 3 հավելվածը սահմանված է հետևյալ ձևով.

Հավելված 3

«---ԳՀԱՊՁԲ---/---»* ծածկագրով

գնանշման հարցման հրավերի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին

Սույնով _____-ն հայտարարում և հավաստում է, որ

մասնակցի անվանումը

բավարարում է «---ԳՀԱՊՁԲ---/---»* ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընկերությունը թիվ 3 հավելվածով՝ որակավորման չափանիշներին բավարարելու մասին հայտարարության համաձայն հայտնել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

Այս մասով ցանկանում ենք նշել, Ընկերությունը ընդամենը ներկայացրել է հայտարարություն՝ Կարգի 63-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն և չի պարտավորվել ներկայացնելու որակավերոըմը հիմնավորող հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընկերությունը հայտ է ներկայացրել 52-րդ, 68-րդ և 82-րդ չափաբաժինների համար, և բոլոր 3 չափաբաժինների համար առանձին և միասին ներկայացված գինը չի գերազանցել գնումների բազային միավորի հնգապատիկը՝ 5,000,000 ՀՀ դրամը: Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկներն ըստ նշված չափաբաժինների կազմել են՝ 52-րդ չափաբաժնի մասով (Բժշկական ասեղներ) 239,900 ՀՀ դրամ, 68-րդ չափաբաժնի մասով (Անզգայացման ասեղներ) 146,250 ՀՀ դրամ, 82-րդ չափաբաժնի մասով (Սկարիֆիկատոր պլաստմասե) 6,600 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի /այսուհետ նաև՝ Հանձնաժողով/ 23.07.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն 52-րդ, 68-րդ, և 82-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը հրավերի 8.12-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն 19.07.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե /այսուհետ նաև՝ Կոմիտե/:

Կոմիտեն 23.07.2018թ. ներկայացրել է եզրակացություն, որի համաձայն «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելուն նախորդող երեք տարիների համախառն եկամուտը կազմել է 0 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի 24.07.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 3.1 արձանագրության համաձայն՝ Կոմիտեի կողմից տրված եզրակացության համաձայն «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելուն նախորդող երեք տարիների համախառն եկամուտը կազմել է 0 ՀՀ դրամ: Հիմք ընդունելով եզրակացությունը, որոշում է կայացվել հարցում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն Ընկերության հայտը մերժելու հիմնավորում ստանալու համար:

Պատվիրատուն 24.07.2018թ. թիվ 335 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն և հայտնել է, որ հայտարարվել է գնման ընթացակարգ 5 միլիոն դրամը գերազանցող գնումների օրինակելի ձևին համապատասխան, քանի որ գնման ընթացակարգի նախահաշվային գինը կազմել է 10,466,385 ՀՀ դրամ:

Այս մասով ցանկանում ենք նշել, որ Պատվիրատուի կողմից վերը նշված գումարը վերաբերում է հայտարարված բոլոր 95 չափաբաժինների, այլ ոչ թե առանձին տողերի համար:

Պատվիրատուն խնդրել է հայտնել, համախառն եկամուտ չունենալու դեպքում մասնակցի հայտը ենթակա է մերժման, թե ոչ:

Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 03.08.2018թ. թիվ 04/27-1/14113-18 գրությամբ հայտնել է, որ գնման ընթացակարգի շրջանակում մասնակիցների գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով ներկայացվոց պահանջները և գնահատման կարգը սահմանված է հրավերի 1-ին մասի 7-րդ բաժնի 20-րդ կետով:

Հանձնաժողովի 09.08.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 3.2 արձանագրության 2 կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացված պարզաբանման համաձայն «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ին տալ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի շտկման մեկ օր ժամկետ:

Բողոքի իրավական հիմքերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ նաև՝ Օրենք/ 28-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ եթե գնումն իրականացվում է չափաբաժիններով, և մասնակիցներին թույլատրվում է հայտեր ներկայացնել գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների միայն մի մասի համար, ապա հրավերը պետք է պարունակի դրա պայմանները և կարգը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 32-րդ կետի 18-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների:

Կարգի 63-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

2) եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ գնման ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը կամ գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքի ձեռքբերումը կամ մասնակիցն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջը չի սահմանվում հրավերով և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

ՀՀ ֆինանսների նախարարությունը վերոհիշյալ հարցի կապակցությամբ ներկայացրել է պաշտոնական պարզաբանում, որի համաձայն. «Ինչպես հայտնի է, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 18-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների:

Սույն թվականի մայիսի 24-ի ՀՀ ֆինանսների նախարարի համապատասխան հրամաններով սահմանվել են գնումների բազային միավորի հնգապատիկը գերազանցող և չգերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը, որոնք տեղադրված են www.gnumner.am կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում:

Նշվածով պայմանավորված՝ հայտնում ենք, որ գնման գործընթացներ կազմակերպելիս հիշյալ օրինակելի ձևերը կիրառելիս որպես գնման առարկաների նախահաշվային գներ անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ գնման գործընթացի շրջանակներում յուրաքանչյուր չափաբաժնի գնման առարկայի նախահաշվային գինն առանձին, այլ ոչ թե բոլոր չափաբաժինների նախահաշվային գների հանրագումարը, օրինակ՝ եթե նախատեսվում է ձեռք բերել A4 ֆորմատի թուղթ և գրիչ գելային, որոնց համար ըստ հաստատված գնումների պլանի հատկացված են համապատասխանաբար 7,0 մլն. ՀՀ դրամ (2800 տուփ x 2500 ՀՀ դրամ) և 1,5 մլն. ՀՀ դրամ (2500 հատ x 600 ՀՀ դրամ), ապա որպես նախահաշվային գին պետք է հիմք ընդունել յուրաքանչյուր չափաբաժնի նախահաշվային գինը և՝ կամ A4 ֆորմատի թղթի համար կազմակերպել առանձին գնման գործընթաց՝ կիրառելով գնումների բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարության և հրավերի օրինակելի ձևը, իսկ գրիչ գելայինի համար կազմակերպել առանձին գնման գործընթաց՝ կիրառելով գնումների բազային միավորի հնգապատիկը չգերազանցող գնման հայտարարության և հրավերի օրինակելի ձևը, կամ երկու գնման առարկաների համար կազմակերպել մեկ գնման գործընթաց՝ հրավերում յուրաքանչյուր գնման առարկայի համար նախատեսելով որակավորման չափանիշների առանձին պահանջներ»:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող

հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Բողոքի վերլուծությունը և պահանջը.

«Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի, բժշկական պարագաների և լաբորատոր նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/0104» ծածկագրով գնման ընթացակարգ:

Ընթացակարգով հրավերի 1-ին մասի 1-ին կետով գնման առարկան խմբավորվել է 95 չափաբաժինների և գնման ընթացակարգը հայտարարվել է գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող գնումների բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերին համապատասխան, սակայն նշված 95 փափաբաժիններից առնվազն 3 չափաբաժիններով նախատեսված գնման առարկայի նախահաշվային գինը չի գերազանցել գնումների բազային միավորի հնգապատիկը /52-րդ, 68-րդ և 82-րդ չափաբաժիններ/:

«Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներով՝ հայտը ներկայացրել է առանձին չափաբաժիններով՝ որոնց համար առանձին և միասին ներկայացված գինը չի գերազանցել գնումների բազային

միավորի հնգապատիկը՝ 5,000,000 ՀՀ դրամը՝ այսինքն գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ գնման ընթացակարգի շրջանակում Ընկերության կողմից ներկայացված առավելագույն չափաբաժնի մասով չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը, հետևաբար, գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն պետք է իրականացվեր ըստ առանձին չափաբաժինների, ինչի պարագայում Ընկերությունը թիվ 3 հավելվածով ներկայացրել է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին, սակայն, Կարգի 63-րդ կետի պայմաններով նախատեսված՝ պարտավոր չէր ներկայացնել որակավորման չափանիշներին համապատասխանելու մասին որևէ հիմնավորում:

Ընթացակարգի հրավերի օրինակելի ձևի համաձայն թիվ 3 հավելվածը պետք է ներկայացվեր հետևյալ կերպ.

Հավելված 3

«-ՀԲԿ--ԳՀԱՊՁԲ-18--/-0104--»* ծածկագրով

գնանշման հարցման հրավերի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին

Սույնով _____-ն հայտարարում և հավաստում է, որ

մասնակցի անվանումը

բավարարում է «-ՀԲԿ--ԳՀԱՊՁԲ-18--/-0104--»* ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Սակայն, «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն թիվ 3 հավելվածը ներկայացրել է հետևյալ կերպ.

Հավելված 3

«-ՀԲԿ--ԳՀԱՊՁԲ-18--/-0104--»* ծածկագրով

գնանշման հարցման հրավերի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին

Սույնով «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն հայտարարում և հավաստում է, որ բավարարում է «-ՀԲԿ--ԳՀԱՊՁԲ-18--/-0104--»* ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

Այս պարագայում Ընկերությունը ընդամենը ներկայացրել է հայտարարություն՝ Կարգի 63-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին համաձայն, քանի որ իր կողմից ներկայացված հայտով ներկայացված չափաբաժինների նախահաշվային գները չեն գերազանցել գնումների բազային միավորի հնգապատիկը: Ընկերությունն այդ պատճառով նաև չի պարտավորվել ներկայացնելու որակավերումը հիմնավորող հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչը նախատեսված է եղել հրավերի օրինակելի ձևով:

Ցանկանում ենք նաև նշել, որ Պատվիրատուի կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված հարցման մեջ չի նշվել, որ «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ի կողմից և ընդհանրապես գնման ընթացակարգի նախահաշվային գինը մի շարք տողերով չի գերազանցել գնումների բազային միավորի հնգապատիկը, այլ նշվել է որ նախահաշվային գինը կազմում է տաս միլիոն ՀՀ դրամից ավել: Այդ իսկ պատճառով ՀՀ ֆինանսների նախարարությունը Պատվիրատուին առաջարկել է առաջնորդվել հրավերով սահմանված կարգով և տալ մասնակցին որակավորումը հիմնավորող փաստաթղթերը շտկելու հնարավորություն: Կարծում ենք, որ այլ հարցման մեջ ամբողջովին եղելությունը ներկայացնելու պարագայում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նման պատասխան չէր ստացվի:

Վերոգրյալ իրավական հիմքերի և փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ «Հրազդանի Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/0104» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 8-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 18-րդ ենթակետով, 63-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջներ»:

«Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն 21.08.2018թ. գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է Բողոքի լրացում, որով, մասնավորապես հայտնել է հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ նաև՝ Օրենք/ 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավական հիմքերի և փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ «Հրազդանի Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/0104» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները, քանի որ Ընկերությունը ներկայացրել է Հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան փաստաթուղթ, սակայն այն չի արձանագրվել Հանձնաժողովի կողմից, չի կասեցվել նիստը և չի տրվել անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի հրավերում խախտումն արձանագրելու և մինչև հայտերի բացման նիստը այն չբողոքարկելու հիմքերին, ապա հայտնում ենք, որ «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն քաջ գիտակցել է, որ ձեռքբերվող գնման առարկան խիստ անհրաժեշտ է բժշկական կենտրոնի համար և այստեղ առկա է նաև ապահովման խնդիր, այդ պատճառով չի ցանկացել բողոք ներկայացնել և անհարկի հետաձգել ապրանքների ձեռքբերումը, բայց քանի որ կայացվել է Ընկերության հայտը մերժելու մասին որոշում, ապա այս պարագայում ներկայացվել է բողոք:

Բացի այդ, «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ի գնային առաջարկը եղել է նվազագույնը, և այս պարագայում Ընկերությանը հաղթող չճանաչելու դեպքում ՀՀ պետական բյուջեն կկրի մեծ վնասներ, որը բնականաբար ցանկալի չէ: Նմանատիպ վերլուծություն է նաև կատարվել ԳԲԽ-ԷՍ-2018/89 ծածկագրով բողոքի վերաբերյալ որոշում կայացնելիս»:

Ելնելով վորոգրյալից՝ «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է.

Պարտավորոցնել «Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի, բժշկական պարագաների և լաբորատոր նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/0104» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին.

1. Դադարեցնել 09.08.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 3.2 արձանագրության 2-րդ կետով «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ին որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի շտկման համար մեկ օր ժամկետ տալու մասին կայացված որոշումը:

2. Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան գնման ընթացակարգի 52-րդ, 68-րդ և 82-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող՝ «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ին նույն չափաբաժինների մասով ճանաչել ընտրված մասնակից»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

2. «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

«Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ի կողմից 13.08.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 15.08.2018թ. թիվ 359 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ս.թ. հուլիսի 6-ին «Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի, բժշկական պարագաների և լաբորատոր նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է գնանշման հարցման ընթացակարգ: Մրցույթը կազմակերպվել է 95 չափաբաժինների համար և նախահաշվային գինը կազմել է 10,466,385 ՀՀ դրամ, ընդ որում, հրավերով նախատեսված հայտի՝ գնումների միասնական անվանացանկի առաջին 3 նիշերի

համընկնումով չափաբաժինների ընդհանուր գումարը գերազանցել է 5 մլն դրամը: Այդ պատճառով հայտարարվել է մրցույթ՝ 02.03.2018թ. թիվ 75-Ա հրամանով նաշատեսված գնումների գործընթացում օգտագործվող 5 մլն դրամը գերազանցող հրավերին համապատասխան:

Մրցույթին հայտ ներկայացրած «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն ներկայացրել է մինչև 5 մլն դրամ հրավերի հավելված N3 և 52-րդ, 68-րդ և 82-րդ չափաբաժինների համար գնային առաջարկներ: Ընդ որում, 68-րդ չափաբաժնի համար մասնակիցը ներկայացրել է նախահաշվային գնից բարձր գին: Բանակցությունների արդյունքում «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն կատարել է գնային առաջարկի նվազեցում և դարձել է 52-րդ, 68-րդ և 82-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Այնուհետև Հանձնաժողովի կողմից ՀՀ ՊԵԿ ուղարկվել է հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 2.5 կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

ՀՀ ՊԵԿ կողմից հարցմանն ի պատասխան նշվել է, որ «Ֆինանսական միջոցների» գնահատման համար «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ի նախորդ 3 տարիների համախառն եկամուտը կազմել է 0 (զրո) դրամ: Մեր կողմից ՀՀ ֆինաննսերի նախարարություն ուղարկվել է գրություն, որով խնդրել ենք վերը նշվածի վերաբերյալ տալ պարզաբանում՝ մասնակցի հայտը օրենքով հահմանված կարգով գնահատելու համար: ՀՀ ֆինանսների նախարարության կողմի ստացված պատասխանի համաձայն՝ մասնակցին պետք է տրամադրվի 1 օրյա ժամկետ՝ համապատասխանությունը շտկելու համար: Այս մասին կազմվել է արձանագրություն, որում նշվել է նիստը կասեցնելու պահանջի մասին և ուղարկվել Ընթացակարգի բոլոր մասնակիցներին»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Լարիսա Նավասարդյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/95 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ի կողմից 13.08.2018թ. ներկայացրած բողոքը, բողոքի լրացումը, և կից փաստաթղթերը, «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/0104» գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/0104» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 23.07.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3, 24.07.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 3.1, և 09.08.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 3.2, արձանագրությունները, «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը.

«Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի, բժշկական պարագաների և լաբորատոր նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/0104» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգով հրավերի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնման առարկան խմբավորվել է 95 չափաբաժիններում:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների հայտ է ներկայացրել նաև «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն:

Հրավերի 1-ին մասի 2.4 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող ֆինանսական միջոցներ:

Հրավերի 1-ին մասի 2.5 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը.

բ. նույն ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, որի իսկությունը հանձնաժողովը գնահատում է նույն հրավերով սահմանված պայմաններով:

գ. եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ մասնակիցը անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է, ապա նույն

ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված պայմանը չի գործում և տվյալ մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն:

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Հրավերի հավելված 3-ով՝ որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին մասնակցի կողմից ներկայացվող հայտարարությամբ, նախատեսվել է, որ մասնակիցը հայտնում և հավաստում է, որ բավարարում է «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/0104» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

«Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն Հրավերի թիվ 3 հավելվածով՝ որակավորման չափանիշներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ բավարարում է «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/0104» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

Ընկերության կողմից հայտ է ներկայացրել Ընթացակարգի 52-րդ, 68-րդ և 82-րդ չափաբաժինների համար, ընդ որում, վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկներն ըստ նշված չափաբաժինների կազմել են՝ 52-րդ չափաբաժնի մասով (Բժշկական ասեղներ)՝ 239,900 ՀՀ դրամ, 68-րդ չափաբաժնի մասով (Անզգայացման ասեղներ)՝ 146,250 ՀՀ դրամ, 82-րդ չափաբաժնի մասով (Սկարիֆիկատոր պլաստմասե)՝ 6,600 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի 23.07.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն 52-րդ, 68-րդ, և 82-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է հրավերի 8.12-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ ՊԵԿ հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 2.5 կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

ՀՀ ՊԵԿ կողմից 23.07.2018թ. ներկայացրել է եզրակացություն, որի համաձայն «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարային ծավալը կազմել է 0 ՀՀ դրամ:

Հանձնաժողովը 24.07.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 3.1 արձանագրությամբ արձանագրել է, որ ՀՀ ՊԵԿ կողմից 23.07.2018թ. ներկայացված եզրակացության համաձայն՝ «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելուն նախորդող երեք տարիների համախառն եկամուտը կազմել է 0 ՀՀ դրամ: Հիմք ընդունելով նշված եզրակացությունը, որոշում է կայացվել հարցում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն Ընկերության հայտը մերժելու հիմնավորում ստանալու համար:

Պատվիրատուի կողմից 24.07.2018թ. թիվ 335 գրությամբ հարցում է ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն, որով վերջինս հայտնել է, որ գնման ընթացակարգի նախահաշվային գինը կազմել է 10,466,385 ՀՀ դրամ, և խնդրել է պարզանաբանել, թե ինչպես պետք է գնահատվի «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ի հայտը, եթե ՀՀ ՊԵԿ կողմից 23.07.2018թ. ներկայացված եզրակացության համաձայն՝ «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելուն նախորդող երեք տարիների համախառն եկամուտ չունի:

Ի պատասխան վերոնշյալ հարցմանը, ՀՀ ֆինանսների նախարարությունը 03.08.2018թ. թիվ 04/27-1/14113-18 գրությամբ հայտնել է, որ գնման ընթացակարգի շրջանակում մասնակիցների գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով ներկայացվոց պահանջները և գնահատման կարգը սահմանվել է հրավերի 1-ին մասի 7-րդ բաժնի 20-րդ կետով:

Հանձնաժողովի 09.08.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 3.2 արձանագրության 2 կետի համաձայն՝ Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.08.2018թ. թիվ 04/27-1/14113-18 գրությամբ ներկայացված պարզաբանումը, որոշել է «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ին տրամադրել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը շտկելու մեկ օրյա ժամկետ:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստում Ընկերության ներկայացուցիչը պնդեց Բողոքն ամբողջությամբ՝ Հանձնաժողովի ուշադրությունը հրավիրելով այն փաստի վրա, որ Ընթացակարգի շրջանակներում գնման առարկան խմբավորվել է 95 չափաբաժինների և գնման ընթացակարգը հայտարարվել է գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող գնումների բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերին համապատասխան, սակայն Ընկերության կողմից մասնակցության հայտ

ներկայացված՝ երեք չափաբաժինների մասով նախատեսված գնման առարկայի նախահաշվային գինը չի գերազանցել գնումների բազային միավորի հնգապատիկը, ինչից ելնելով, և ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներով՝ «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն թիվ 3 հավելվածով ներկայացրել է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին, սակայն, Կարգի 63-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին համապատասխան՝ չի ստանձնել որակավորման չափանիշներին համապատասխանելու մասին որևէ հիմնավորում ներկայացնելու պարտավորություն:

Պատվիրատուի ներկայացուցիչն առարկեց, նշելով, որ ընթացակարգը կազմակերպվել է 95 չափաբաժինների համար և նախահաշվային գինը կազմել է 10,466,385 ՀՀ դրամ, ընդ որում, հրավերով նախատեսված հայտի՝ գնումների միասնական անվանացանկի առաջին 3 նիշերի համընկնումով չափաբաժինների ընդհանուր գումարը գերազանցել է 5 մլն դրամը: Այդ հանգամանքով պայմանավորված՝ Պատվիրատուն հայտարարել է ընթացակարգ՝ 02.03.2018թ. թիվ 75-Ա հրամանով նախատեսված գնումների գործընթացում օգտագործվող 5 մլն դրամը գերազանցող հրավերի օրինակելի ձևին համապատասխան համապատասխան:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում, կիրառվում է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի նորմը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք)՝

- 2-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի համաձայն՝ գնման գինը ապրանքը, աշխատանքը, ծառայությունը ձեռք բերելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հաշվարկված նախահաշվային գինն է:

- 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

- 28-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ եթե գնումն իրականացվում է չափաբաժիններով, և մասնակիցներին թույլատրվում է հայտեր ներկայացնել գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների միայն մի մասի համար, ապա Հրավերը պետք է պարունակի դրա պայմանները և կարգը:

- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

- 32-րդ կետի 18-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների:

- 63-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

2) եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ գնման ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը կամ գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքի ձեռքբերումը կամ մասնակիցն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է նույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա նույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջը չի սահմանվում հրավերով և մասնակիցը

հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն կետով նախատեսված պահանջները:

«ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/0104» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի՝

-2.5 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Մասնակցին ներկայացվող «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը.

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, որի իսկությունը հանձնաժողովը գնահատում է նույն հրավերով սահմանված պայմաններով:

գ. եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ մասնակիցը անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է, ապա նույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պայմանը չի գործում և տվյալ մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն:

«ՀՀ ֆինանսների նախարարի մի շարք հրամաններում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի 2018 թվականի մարտի 2-ի N 75-Ա հրամանի համաձայն՝ գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող գնումների բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հրավերների օրինակելի ձևերով թիվ 3 հավելվածը սահմանվել է հետևյալ ձևով. Մասնակիցը որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ հայտարարում և հավաստում է, որ բավարարում է գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և

ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Նույն հրամանով գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող անշարժ գույքի և գնումների բազային միավորի հնգապատիկը չգերազանցող գնման հրավերների օրինակելի ձևերով թիվ 3 հավելվածը սահմանվել է հետևյալ ձևով. Մասնակիցը որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ հայտարարում և հավաստում է, որ բավարարում է գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Ընկերության կողմից հայտ է ներկայացվել Ընթացակարգի 52-րդ, 68-րդ և 82-րդ չափաբաժինների համար, ընդ որում, դրանցից յուրաքանչյուրի նախահաշվային գինը, ինչպես նաև դրանց նախահաշվային գների հանրագումարը չի գերազանցել գնումների բազային միավորի հնգապատիկը:

- «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն Հրավերի թիվ 3 հավելվածով՝ որակավորման չափանիշներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ բավարարում է «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/0104» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

- ՀՀ ՊԵԿ կողմից 23.07.2018թ. ներկայացված եզրակացության համաձայն՝ «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելուն նախորդող երեք տարիների համախառն եկամուտը կազմել է 0 (զրո) ՀՀ դրամ:

- Հանձնաժողովի 09.08.2018թ. կայացած նիստի թիվ 3.2 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ին տրամադրել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը շտկելու մեկ օրյա ժամկետ:

Հաշվի առնելով, որ Կարգի 63-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվել է, որ՝ եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ գնման ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը (...), ապա մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին, և նկատի ունենալով, որ Ընկերության կողմից հայտ է ներկայացվել Ընթացակարգի այնպիսի չափաբաժինների համար, որոնց նախահաշվային գինը չի գերազանցել գնումների բազային միավորի հնգապատիկը, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերությունն ըստ էության ապահովել է Կարգի, որպես

ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի, 63-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջի կատարումն, այն է՝ հայտով ներկայացրած հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ Հանձնաժողովը «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ին որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը շտկելու մեկ օրյա ժամկետ տրամադրելու մասին որոշում կայացնելով՝ գործել է ոչ իրավաչափ, խախտվելով Օրենքի 28-րդ հոդվածի 8-րդ մասով, Կարգի 32-րդ կետի 18-րդ ենթակետով և 63-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջները, քանի որ Ընկերությունը թիվ 3 հավելվածով ներկայացրել է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին, և չի ստանձնել որակավորման չափանիշներին համապատասխանելու մասին որևէ հիմնավորում ներկայացնելու պարտավորություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.«Լևոն և Լամարա» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 10.08.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորոցնել «Հրազդանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղորայքի, բժշկական պարագաների և լաբորատոր նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/0104» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ 09.08.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 3.2 արձանագրության 2-րդ կետով «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ին որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի շտկման համար մեկ օր ժամկետ տալու մասին կայացված որոշումը դադարեցնելու վերաբերյալ համապատասխան որոշում:

3. Պարտավորոցնել Հանձնաժողովին ընդունել՝ գնման ընթացակարգի 52-րդ, 68-րդ և 82-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչված «Լևոն և Լամարա» ՍՊԸ-ին նույն չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ